

ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

ԹԵՐԹ	ԱՆՎԱՆՈՒՄ	ԾԱՆՈԹ.
ՋՕ-1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՍԿԻՁԲ)	
ՋՕ-2	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՇԱՐՈՒՖՆԱԿՈՒԹՅՈՒՆ)	
ՋՕ-3	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՎԵՐՁ)	
ՋՕ-4	ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ	
ՋՕ-5	ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ	
ՋՕ-6	ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԽԵՄԱ	
ՋՕ-7	ՕԴԱՓՈՒՆՈՒԹՅԱՆ Կ1,Ա1,Ա2,Ա3 ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԽԵՄԱՆԵՐ ԵՎ Կ1 ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՆՔ	

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀՀ Քնչական կոմիտեին հանձնված ՀՀ ք. Երևան Գ. Նժդեհի թիվ 27 հասցեում գտնվող մասնաշենքի ջեռուցման և օդափոխության նախագիծը իրականացված է համաձայն նախագծման առաջադրանքի, ճարտարապետա - շինարարական գծագրերի, գործող շինարարական նորմերի և կանոնների՝ ՀՀ ՇՆ 11-3.02-95 , ՇՀսՈՒ 2.08.02-89:

Ջեռուցման համար արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանը ընդունված է $t = -19^{\circ} \text{C}$:
Շենքի ջեռուցման համար ջերմության ծախսը կազմում է՝ $Q=55$ կվտ:

Որպես ջերմության աղբյուր հանդիսանում են պատին ամրացվող 35 կվտ հզորությամբ երկու հատ գազով աշխատող կաթսաներ, որոնք տեղադրվում են 1-ին հարկում սարքավորումների սենյակում:

Ջերմատարը հանդիսանում է տաք ջուրը՝ $T1=80^{\circ}\text{C}$ և $T2=60^{\circ}\text{C}$ պարամետրերով:

Նախագծում ընդունված է երկխողովականի, հորիզոնական մատակարարումով, ջերմատարի փակուղային շարժումով ջեռուցման համակարգ: Մատակարարող խողովակներն անցնում են հարկերի հատակների հաստության միջով: Համակարգի դատարկումը կատարվում է դատարկման ծորաններով փականների միջոցով: Համակարգից օդը հեռացվում է մարտկոցների վրա տեղադրված օդահան ծորանների միջոցով:

Որպես ջեռուցման սարքեր ընտրված են այլումինե մարտկոցներ: Շենքի ջերմամատակարարման համար օգտագործվել են պոլիպրոպիլենե խողովակներ: Բոլոր խողովակները ջերմամեկուսացվում են ռետինե խողովակներով:

Սարքավորումների սենյակում իրականացվում է օդափոխություն: Ներածումը կատարվում է ճաղավանդակի միջոցով, իսկ արտածումը բնական, տանիքից դուրս:

Շենքի դահլիճի համար նախատեսված են մեխանիկական դրոմամբ օդափոխության ներածման և արտածման համակարգեր: Կատարվում է օդի լավորակում հովացման ներքին և արտաքին բլոկների միջոցով:

Օդափոխության համար օգտագործվել են "REMAK" ֆիրմայի կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել համարժեք պարամետրերով այլ համակարգով:

Օդափոխության ներածման համակարգերի սարքավորումները տեղադրված են միջանցքի առաստաղի տակ:

Ներածման համակարգի օդատարները ջերմամեկուսացվում են ֆոլգապատ ապակեբամբակով:

Սան. հանգույցներից արտածումն իրականացվում է "VENTS" ֆիրմայի օդամուղների միջոցով:

ՏՆՕՐԵՆ	Ն. ՍԱՐԳՍՅԱՆ		ՀՀ ՔՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ ՀՀ Ք. ԵՐԵՎԱՆ Գ.ՆժԴԵԴԻ ԹԻՎ 27 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ			
ՆԱԽԱԳԾԵՑ	Կ.ՎԱՐԴԱՆՅԱՆ		ՋԵՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՕԴԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	
				ԱՆ	ՋՕ-1	7
Պաշտոն	Ազգանուն	Ստորագ.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ (ՍԿԻՁԲ)	«ՍԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻԱՆՆԱ» ՍՊԸ		